«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գնահատում
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Շահվերդյան Գոհար
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	*Ստեփանավանի թիվ 1 հիմնական դպրոց*
ՂԵԿԱՎԱՐ	Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Ծատուրյան

Ստեփանավան 2022 թ.

Բովանդակություն

Ներածություն……..…….3

Գնահատման ընդհանուր բնութագիրը…….……..……4

Գահատման տեսակները…….…….……6

Եզրակացություն……..……..……..……12

Օգտագործված գրականության ցանկ……14

Ներածություն

<<Գնահատել նշանակում է ստեղծագործել>>:

Գյոթե

Հայաստանի Հանրապետությունում կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությանը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցնելուն:

Միջնակարգ հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններում կիրառվում է գնահատում, որը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց: Գնահատումն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների և ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: <<Գնահատում>> բառը կիրառության մեջ է մտել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Գնահատումը բազմաբնույթ տերմին է, աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է: Այն ուսուցման գործընթացում վերահսկողություն իրականացնող կարևոր բաղադրիչ է, որը ապահովում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը և հանդես է գալիս որպես ուսումնադաստիարակչական գործընթացի շտկման և կարգավորման միջոց: Արդյունավետ գնահատում իրականացնելու համար ուսուցիչները կարիք ունեն լիարժեք ըմբռնելու գնահատման համակարգի էությունը, քանի որ գնահատում կատարելը խիստ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ է պահանջում: Հակառակ պարագայում, եթե ուսուցիչը օժտված չէ անհրաժեշտ մանկավարժական ունակություններով, ապա նա դասերին չի կարող լավ փոխհարաբերություններ հաստատել աշակերտների հետ, և դրանով կնվազի ուսումնական աշխատանքի արդյունավետությունը:

Այսպիսով՝ գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի վերահսկումն է: Գնահատման միջոցով որոշվում է աշակերտի սոցիալական դիրքորոշումը, աշխարհընկալումը, մտավոր և բարոյական զարգացումը:

Գնահատման ընդհանուր բնութագիրը

Ա. Էյնշտեյնը ասել է <<Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքը անկարող է>>:

Գնահատումը տեղեկատվություն ստանալու, հավաքելու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ամբողջացնելու և վերահսկելու գործընթաց է: Գնահատումը ներառում է ամենօրյա գործունեության, իրական կյանքում յուրացրածի, որոշակի ձեռքբերումների դիտարկում, ինչպես նաև նյութի յուրացումը ստուգող չափորոշչային պահանջներ:

Գնահատականը գնահատման արդյունքն է: Անհրաժեշտ է տարբերակել «գնահատում», «գնահատական» հասկացությունները: «Գնահատել» նշանակում է արժևորել, որակել, կարծիք հայտնել, իսկ «գնահատականը» նիշ է, թիվ, սահման, մակարդակ: Ե. Վ. Բանշիկովնան գրում է. «Թվանշանն աշակերտների գիտելիքների մակարդակի չափանիշն է՝ սահմանված պետական ձևաչափերով: Գնահատումը սովորողի ստեղծագործական գործունեության, ներուժի, ձգտումների բառացի որակավորումն է: Թվանշանը բխում է գնահատումից, և այդ իսկ պատճառով գնահատումը պետք է ուղղորդի թվանշանին, այլ ոչ թե հակառակը»:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսումնական որակի բացահայտումն ու վերահսկումն է:

Գնահատականի միջոցով ուսուցիչն արժևորված հարաբերություններ է ստեղծում իր և աշակերտների միջև: Նա գնահատականի միջոցով ձևավորում և խմբավորում է աշակերտների հարաբերությունը, ինչի շնորհիվ ուսուցիչը բարոյական և գեղագիտական դիրքորոշում է տալիս աշակերտներին: Երբ սովորողները հաճախում են դպրոց, նրանք ցանկանում են ուսուցիչներից իրենց

հաջողությունների մասին գնահատականներ ստանալ: Եթե այդ առաջին գնահատականները վկայում են, որ նրանք հաջողություններ ունեն, նրանց մեջ զարգանում է լավատեսությունը և ապագա ավելի մեծ հաջողությունների ակնկալիքը: Սա, բնականաբար, ոգևորում է սովորողին, նրան մղում ավելի շատ աշխատելու, ինչն էլ իր հերթին ավելի մեծ հաջողության խթան է դառնում: Հաճախ անհամապատասխան գնահատականը ծնում է հիասթափություն և վիրավորանք՝ բացասաբար ազդելով անձի «ես»-ի վրա: Այն փաստը, որ սովորողը դեռ խնդիրը չի կարողանում լուծել, հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին, կամ եթե դեռ չի կարողանում հստակ վերարտադրել, կառուցել բանավոր խոսք, արագ կողմնորոշվել, հստակ պատասխանել, ուրեմն սովորողը թույլ աշակերտ է: Անհամապատասխան գնահատականն ազդում է սովորողի ինքնագնահատականի վրա (թերագնահատում, գերագնահատում):

Կրտսեր դպրոցական տարիքում անձի ինքնագնահատականը ձևավորվում է ուսուցչի գնահատականի ազդեցության ներքո: Երեխաները մեծ ուշադրություն են դարձնում, թե ինչպես են մեծահասակները գնահատում իրենց հնարավորությունները: Այն երեխան, որն ուսումնական գործընթացի սկզբում ունեցել է դժվարություններ և ցածր է գնահատվել, կարծում է, որ ամբողջ կյանքում այդպես էլ պիտի շարունակվի, և հակառակը, ով հաջողություններ է ունեցել, սպասում է, որ մշտապես իրեն հաջողությունը պիտի ուղեկցի:

Գնահատականը բացասական ազդեցություն ունի նաև դեռահասության և ավագ դպրոցական տարիքում: Այն ազդում է անձի ինքնակայացման վրա, նրա սոցիալական դիրքի ու տեղի վրա: Բացասական երևույթ է նաև, երբ գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատականում ամփոփվում է սովորողի վարքը՝ ազդելով նրա ուսումնական առաջադիմության վրա: Դեռահասության և ավագ դպրոցական տարիքում այդ փաստը խոր հիասթափություն է ծնում

Գնահատման տեսակներ

Գնահատման տեսակները բազմազան են, ընտրության ժամանակ պետք է նայել դրանց համապատասխանությանը, թույլատրելիությանը, իրագործելիությանը և կայունությանը, որպեսզի հասկանալ՝ արդյոք կրթական նպատակներն իրագործելի են, թե ոչ։է։

Գնահատումը շարունակական գործընթաց է, որի նպատակը՝ արդյունավետ ուսուցումն է։ Գնահատումը տեղեկատվության ժողովում է այն բանի մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը։

Գնահատումն իրականացվում է գրավոր և բանավոր։ Այն կարող է լինել որակական և քանակական։ Գոյություն ունեն գնահատման մի շարք ձևեր՝ ընթացիկ գնահատում, միջանկյալ գնահատում, թեմատիկ գնահատում, պարբերական գնահատում, տարեկան գնահատում, ամփոփիչ գնահատում, ռուբրիկներ, ոչ խոսքային գնահատում, կրեդիտային միավորներով գնահատում, ռեյտինգային գնահատում, թղթապանակ, ինքնագնահատում։

Հանրակրթության ոլորտը պայմանականորեն տարանջատվում է ներքին և արտաքին գնահատումների։

Ներքին գնահատումը իրականացնում են ուսուցիչները, կիրառվում է դասի ընթացքում՝ հարցման, ուսուցողական, ստուգողական և այլ առաջադրանքների ստուգման միջոցով, դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում։

Արտաքին գնահատումն իրականացնում են դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունները, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը։ Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները։

Սովորողների ուսումնառության ընթացիկ գնահատման ձևերն են՝ ուսուցանող/ձևավորող գնահատումը և միավորային գնահատումը։

Ուսուցանող/ձևավորող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված բացթողումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացն է, ինչպես նաև հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը։

Սակայն հարկ է նշել, որ հետադարձ կապը չպետք է լինի շատ պարզեցված, որ պատասխանն էլ հետը տրվի, պետք է անպայման տեղ թողնել, որ սովորողը ինքը հարստացնի իր գիտելիքը, իր սխալները հասկանա և շտկի, ուսուցիչը ընդամենը պետք է մատնացույց անի սխալը և հետևողական լինի, որ սովորողը իրոք շտկել է իր սխալները։

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և չունի նիշային գնահատման նպատակ։ Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողի ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին։ Ուսումնառությունը շահում է այն պարագայում, երբ սովորողը բացահայտում է, որ հասել է իր նպատակներից մեկին, քան պարզապես ուսուցչի հավանությանն է արժանացել։

Ուսուցանող գնահատման նպատակով դպրոցում կիրառվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝ յուրացման/ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, խմբային/զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում և այլն։

Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն

առարկայական չափորոշիչների։ Միավորային գնահատումն ունի մրցակցային բնույթ, և դրանով իսկ նրա դերը դառնում է չափազանց կարևոր։ Աշակերտին միավորով գնահատելը պետք է լինի ճիշտ և արդարացի։ Միավորային գնահատման նպատակն է թվանշանների միջոցով գնահատել, գնահատական տալ կամ չափել ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչով ու ծրագրով։ Միավորային գնսհատումը նախատեսվում է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց և ուսումնասիրելուց հետո՝ կիսամյակի ընթացքում գիտելիքի, կարողությունների և հմտությունների յուրացման մակարդակը ամրագրելու, գործնական աշխատանքի կատարման համար։

Միավորային գնահատումն իրականացվում է սովորողների գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով և ունի վերահսկող դեր։ Այն ունի նաե ախտորոշիչ դեր, ուսուցիչը կարողանում է ճշտել յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումների որակը և մակարդակը, ապա ըստ այդմ՝ որոշակի փոփոխություններ մտցնում դասավանդման եղանակների, ուսուցման տեխնոլոգիաների և կիրառվող մեթոդների ոլորտում։

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ գրավոր աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք։

Ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում։ Ըստ նպատակադրման կիրառվում են գնահատման հետևյալ տեսակները՝

- Ընթացիկ գնահատում
- Ամփոփիչ գնահատում
- Հայտորոշիչ գնահատում

- Ձևավորող գմահատում
- Հետազոտական գնահատում
- Ցուցանիշային գնահատում
- Կատարողականության գնահատում
- Սուբյեկտիվ, օբյեկտիվ գնահատում
- Ուղղակի, անուղղակի գնահատում
- Ինքնագնահատում
- Փոխադարձ գնահատում
- Ռուբրիկներ

Ամփոփիչ գնահատումը ի մի է բերում արդյունքները դասընթացի ավարտին գնահատականի միջոցով: Ամփոփիչ գնահատումների մեծ մասը նորմատիվ, կոնկրետ պահի, ձեռքբերման գնահատումներ են:

Ուղղակի գնահատման միջոցով գնահատվում է, թե ինչ է իրականում անում թեկնածուն: Օրինակ՝ մի փոքր խումբ ինչ- որ հարց քննարկում, գնահատողը հետևում է, համեմատում չափանիշների սանդղակի հետ, կատարումը համադրում է սանդղակի համապատասխան կարգերի հետ և գնահատում:

Ուղղակի գնահատումը նպաստավոր է միայն բանավոր խոսքի, գրավոր խոսքի և ընկալման ասպեկտների գնահատման համար, սակայն երբեք ուղղակիորեն չենք կարող տեսնել ընկալունակ գործունեությունը:

Անուղղակի գնահատման ժամանակ սովորաբար գրավոր թեստ է անցկացվում, որը հաճախ գնահատում է հնարավոր հմտությունները:

Սուբյեկտիվ գնահատումը կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից և վերաբերմունքից: Սուբյեկտիվ են գնահատվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները, որոշ գործնական աշխատանքներ:

Օնյեկտիվ գնահատման դեպքում առաջադրանքի պատասխանի գմահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից:

Հայտանիշային գնահատումը հենվում է բացառապես սովորողի՝ տվյալ նյութի իմացության վրա, անկախ դասընկերների տիրապետման աստիճանից:

Գնահատման այս տեսակը նպատակահարմար է օգտագործել ուսումնական առարկայի տիրապետման շարունակությունն ուրվագծելու և համապատասխան ոլորտներն ընդգծելու նպատակով:

Ցուցանիշային(նորմատիվային) գնահատման արդյունքների հիման վրա սովորողները դասակարգվում են ըստ առաջադիմության՝ դասարանի կամ գնահատմանը մասնակցած խմբի (գնահատականների) մյուս անդամների հետ համեմատության մեջ: Գնահատման այս տեսակը նպատակահարմար է օգտագործել տվյալ տարվա ձեռքբերումները նախորդ տարիների ձեռքբերումների հետ բաղդատելիս, ինչպես նաև հետագա աշխատանքների արդյունավետության նպատակով՝ դասարանը խմբերի բաժանելու կամ ըստ աշակերտների կարողությունների նոր դասարաններ կազմելու համար:

Կատարողականության գնահատումը սովորողից պահանջում է անմիջական թեստի կատարման ընթացքում ներկայացնել բանավոր կամ գրավոր խոսքի նմուշներ: Գիտելիքի գնահատումը սովորողից պահանջում է պատասխանել բազմատեսակ հարցերի՝ ներկայացնելով լեզվական գիտելիքների և լեզվական միջոցների տիրապետման ապացույցներ

Ինքնագնահատումը աշակերտի կրթական առաջընթացի համար կարևոր հիմք են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:

Փոխադարձ գնահատումն արվում է զույգերով կամ խմբային աշխատանքի միջոցով: Այստեղ դրսևորվում է դասընկերոջ թույլ տված սխալները տեսնելու և ճիշտ պատասխանը հիմնավորելու կարողությունը: Ինքնագնահատումը կամ փոխադարձ գնահատումը կարելի է իրագործել գնահատման թերթիկով, որն արվում է խմբային կամ զույգերով աշխատանքներից հետո: Փոխադարձ գնահատումը ենթադրում է նաև աշակերտի ինքնահամեմատութնունը դասընկերոջ հետ: Դա առաջընթացը խթանող հանգամանք է:

Վերահսկողությունն ունի կարևոր կրթական ու զարգացնող նշանակություն: Այն նպաստում է ուսուցչի կողմից դպրոցականների համակողմանի ուսումնասիրությանը, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները

խորացնելուն և կատարելագործելուն, աշակերտների իմացական հետաքրքրությունները զարգացնելուն: Սակայն ավելի շուտ վերահսկողությունը պետք է ուսուցչի համար աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու միջոց լինի: Այս դեպքում տեղին է բնութագրային գնահատումը, որն ավելի շուտ տեղեկատվական բնույթ է կրում ինչպես ուսուցչի, այնպես էլ ծնողի և շահագրգիռ մարդկանց համար:



Ցանկալի է տարրական դպրոցում ուսուցման գործընթացի վերահսկողության նպատակով կիրառել միայն բնութագրային գնահատման ձևեր, օրինակ՝ ռուբրիկ:

Ռուբրիկը գնահատման հնար է, ձև, որը հնարավորություն է տալիս հստակ գնահատել նախօրոք սահմանված չափանիշների միջոցով: Այն սանդղակ է, որի միջոցով արտահայտվում է աշակերտի առաջընթացը (գիտելիքի յուրացման աստիճանը, առաջադրանքի կատարման որակը, հմտությունները), ըստ սահմանված չափանիշների: Չափանիշների ցանկն այն որակներն (բաժիներն) են, որոնք կարևորվում են տվյալ գործընթացը գնահատելիս:

Ռուբրիկում սահմանվում են չափանիշներին բավարարելու մի քանի մակարդակներ: Յուրաքանչյուր մակարդակին բավարարելու պահանջները շարադրվում են պարզ, մատչելի ձևով:

Եզրակացություն

Այսպիսով՝ գնահատումը աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ինքնուրույնության, զարգացվածության, դաստիարակվածության, վարքի արժևորումն է: Այն արդյունավետ է, եթե միասնական գործընթաց է, որի արդյունքը տեսնելու համար ժամանակ է պահանջվում: Ուսումնառությունը ներառում է ոչ միայն սովորողի գիտելիքներն ու կարողությունները, այլ նաև արժեքները, վերաբերմունքը, սովորությունները, որոնք անդրադառնում են թե դասարանում, թե դասարանից դուրս նրա հաջողությունների վրա: Հետևաբար գնահատումը առաջին հերթին պետք է ծառայի աշակերտին, այն կարող է լինել խրախուսանք, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու սխալները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերվի նրա կոնկրետ գործողություններին, արդյունքներին այլ ոչ թե անձին: Գնահատումը հարկավոր է նաև ուսուցչին իր աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու և վերջնարդյունքը փաստելու համար: Կարևոր է նաև գնահատումը ծնողի համար երեխայի առաջընթացն արձանագրելու, դաստիարակության շուրջ մտորելու և օգնություն ցուցաբերելու համար:

Հաշվի առնելով աշակերտի վրա ուսուցչի գնահատման ազդեցության հոգեբանական պայմանները՝ կարելի է նկատել, որ գնահատականը կարող է ունենալ նաև դաստիարակչական ներգործություն: Հետևաբար գնահատման չափանիշը պետք է լինի խտրականության բացակայությունը, գնահատման օբյեկտիվության և արդարության սկզբունքների կիրառումը, ինչը կնպաստի

աշակերտի մոտ սոցիալական հավասարակշռության և առողջ մթնոլորտի պահպանմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Միքայելյան, Գիտելիքի գնահատում, դասախոսության փաթեթ, Գյումրի, 2020
2. <<Մխիթար Գոշ>> գիտահետազոտական հոդված, 2020/N1
3. http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829